ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

« » _____ 2021թ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____ հեռ. (0312) 5-33-66

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»-ի

նախագահ Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան 28.12.2021թ. Ձեր թիվ 348-60 հարցման՝ տեղեկացնում ենք, որ Շիրակի մարզպետարանը վարում է հարցումների վիճակագրություն: Ստացված յուրաքանչյուր հարցում «Mulberry» էլեկտրոնային համակարգ մուտքագրվում է «Հարցում» անվամբ և համաձայն «ՀՀ Սահմանադրության» 42-րդ և 51-րդ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածների՝ ստացված բոլոր գրավոր հարցումներին սահմանված ժամկետում տրվում է գրավոր պատասխան:

Շիրակի մարզպետի դեռ 2016 թվականի թիվ 141-Ա որոշմամբ նշանակվել է տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ: Ներկայումս տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի պարտականությունները վերապահված է Շիրակի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Արաքսյա Կիրակոսյանին: Ըստ 2016 թվականի թիվ 141-Ա որոշման, ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալների մշակումն իրականացնում է տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը: Ստացված հարցումների մասին տեղեկատվությունը պարբերաբար հրապարակվում է մարզպետարանի պաշտոնական կայքի /http://shirak.mtad.am/ «Դիմեք մեզ» բաժնի «Տեղեկատվություն ստացված հարցումների վերաբերյալ» ենթաբաժնում:

Շիրակի մարզպետարանի տեղեկատվության ազատության համար պատասխանատու Արաքսյա Կիրակոսյանը մասնակցել է մի շարք

վերապատրաստումների, այդ թվում 2021 թվականի փետրվարի 18-19-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»-ի կողմից կազմակերպված «Տեղեկատվության ազատությունը կառավարման համակարգում» խորագրով երկօրյա աշխատաժողովին, ապրիլի 21-23-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»-ի կողմից կազմակերպված «Փաստերի ստուգումը պաշտոնյաների համար» խորագրով առցանց աշխատաժողովին, ապրիլի 28-30-ին «Հայաստանում ժողովրդավարության իրականացումը բաց տվյալների միջոցով» ծրագրի շրջանակում ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի կողմից կազմակերպված «Բաց տվյալների դասընթացին»:

Recoverable Signature

X

ԱՐՍԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Signed by: ABRAHAMYAN ARSEN 2805670108

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Կատարող՝ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի
ավագ մասնագետ՝ Ֆ. Ալեքսանյան
*Հեռ՝ /0312 /49000*157/*